

ՃՇՂՐԻՏ ԲԱՌԵՐՈՎ ՃՇՄԱՐԻՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զեմ ասի, թե մուտքը արծակի երկիր խանդով ընդունեցի: Ամենկին: Արծանագիր հաջողությունն այնքան քիչ էր, Վերքի ողբով մեկընդմիջտ բացարձակված աբովյանական լեզվահեղեղը այնքան հաճախ էր խուսափում արծակի խաղաղ մարգագետինը խաղաղորեն սնելուց, որ թվում էր թե պատումը հայերենի տարերքը չէ, որ հայերենի տարերքը արծակը չէ, որ հայոց լեզվով ինքնանկարը մեկընդմիջտ հակացուցված է հայ գրողին:

Ասում եք՝ հապա Տիգրանուհի՞ն, Խնձորի այգի՞ն, հապա Եղջերո՞ւն, հապա Մուշե՞ղը... Մուշեղը, Աղասին, Եղջերուն, Սիլան, Խնձորի այգին վկայություն են այն բանի, թե որքան խոսքաշատ ու որքան սակավամարդ է հայ արծակի երկիրը և թե որքան սակավակյաց, որքան անպտուղ, գրեթե ամուլ են այդ երկրի տերերը: Եվ ուրեմն ամեն մի նոր մուտք մեծ ու նոր հույս էր, ամեն շրշյուն՝ մեղեդու սպասում, ամեն ծփանք՝ մեծ հովտի ծավալուն կենդանության ակնկալիք - առավել ևս՝ իր մուտքը:

Արծակի երկիր էր մտել մի տղա, որ, իր բուլոր ու բուլոր նախորդներից ավելի ճշգրիտ՝ ճշգրիտ բառերով ճշմարիտ պատմություններ էր պատմում, մոտավոր բառեր չունեի, որպես թե խոսքը ործաքարին է անցնելու՝ ժլատ ու ընտրող էր, վրիպած բառ չունեի, նրա բառն ու առարկան իրարու նույն պահին էին գտնում, հպանցիկը, ակնթարթայինը, անորսալին, անանունը հայտնվում էին նրա բառը արդեն գտած, արդեն կերպար ու պատկեր դարձած ու անուն առած... Եվ հրճվանք էին պարզում այդ պատկերներն ու կերպարները - ուրախացնում էին իրենց արդեն իսկ կենդանությանը ու բազմությանը, ուրախացնում էր նրանց տերը՝ բազում կոչվածների մեջ եզակիի իր ընտրյալությամբ: Սա ճիշտ գրող էր և սա ճշմարիտ արծակ էր: Մերծակա ամբողջ ամայության պատճառը մոտավորությունն էր, իսկ սա երկարակեցության էր կոչված: Բայց որովհետև Ակսելն ու Մուշեղը գրիչները վար էին դրել անժամանակ, իսկ Մնձուրու երկար կյանքից գրականության էր տրվել մի կարճ ժամանակ միայն և մի կարճ պահի մեջ սպառումը ճակատագիր էր թվում - այս մեկի՞ն ինչ էր պատահելու:

Այն էր պատահելու, որ ծավալված ու շարունակվող իրականությունը այս Վանոյին չէր բավարարում, շատ ավելի ճիշտ՝ չէր բավարարում գրողի, գրական գործի առջև իրականության անհաղորդությունը, այդպիսով՝ գրողի, գրական գործի անդիմությունը ինքը իր համար ծավալված ու շարունակվող իրականության առջև, որպես թե գրականությունը իրականության բաղա-

դրյալը չէ, որպես թե այդ իրականությունը այդ գրականության
ածանցյալը չէ, որպես թե նրանք միմյանցից չեն սերված և միմ-
յանց չեն պատկանում: Իր դեպքում, գոնե այս դեպքում պատ-
ճառը իրենում չէր. ինքն ու զուտ իրենից սերված թափորը
աստնվորի իրենց գործն ու կյանքը ապրում էին բարեխիղճ
հնազանդությամբ - պատճառը մեծ ծեսի կեղծիքն էր, և ինքն ու
կեղծված, եղծված, աղարտված, իր եղծվածությամբ ամբողջ
սերունդներ ու ժամանակ աղարտված այդ իրականությունը
իհարկե իրարու չէին պատկանելու: Իսկ ահա իր անցումը քաղա-
քականության, այլև իշխանության, ասել է ծիսակարգի շրջման՝
ընդունեցի խանդով, իմ փոխարեն հարթակ էր բարձրացել ինքը,
իմ տեղը՝ կալանավում էր ինքը Վանոն, ոստիկանություն ասված
մուրացկան կողոպտչի որջում կանգնում էր ինքը և այսօր ինքն է
վիզ դրել այնտեղ, որտեղ սովորաբար վիզ են ջարդում:

Ինչ լավ է, որ քաղաքականությունը նույնպես, ինչպես գրա-
կանությունը, ինչպես մաթեմատիկան, պատժում է իրեն աղար-
տողներին, ինչ լավ է, որ գրականությունը քաղաքականություն է
դրկել իր եզակի չխարդախողին: